

Ս. Հակոբյան

ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՌԵՆՏԱՆԵՐԸ ՀԻՆ
ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՆՏԱ ԿԱՄ ԿՈՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ֆեոդալական հասարակական-տնտեսական ֆորմացիայի անմիջական նյութական բարիքներ արտադրողների անձնական աշխատանքի և ստեղծած արդյունքների յուրացումը իրականացվում է մինչև պիտանքի համար աշխատանքային, արդյունքային և դրամական, մեկը մյուսին հաջորդող, ռենտաների միջոցով:

Ֆեոդալական հասարակարգի զարգացման զուգընթաց, հողային ռենտաները նույնպես անցել են զարգացման մի շարք էտապներ: Առաջին շրջանում կամ վաղ ֆեոդալական հարաբերությունների սաղմնավորման և զարգացման պայմաններում ֆեոդալական հողային ռենտան ծագել և աստիճանաբար աճել է սոսկ հարկերից ու տուրքերից՝ դեպի նատուրալ բաճար: Արտադրության ֆեոդալական եղանակի հաղթանակը արդեն ենթադրել է պրիմիտիվ աշխատանքային ռենտայի առկայությունը, իսկ զարգացած ֆեոդալիզմի պայմաններում հանդես է եկել աշխատանքային զարգացած և արդյունքներով ռենտան:

Որպեսզի ֆեոդալ-հողատերերը կարողանան դուրս կորզել նյութական բարիքներ արտադրողների հավելյալ աշխատանքը և արդյունքները, վերջիններս պետք է իրենց տրամադրության տակ ունենան հողատերերից ստացած հողակտորներ, սեփական աշխատամիջոցներ և մասնավոր սեփականություն: «Հողագուրկ, ձիագուրկ, տնտեսագուրկ գյուղացին, — գրել է Լենինը, — անպետք առարկա է ճորտատիրական շահագործման համար»¹:

Հայտնի է, որ սեփական արտադրության միջոցներ և մասնավոր սեփականություն ունեցող գյուղացին կամ ձրի և անվճար աշխատանք է կատարում հողատիրոջ կալվածներում կամ թե տալիս է իր արդյունքների մի մասը: Բնականաբար հարց է առաջանում՝ ինչն է ստիպում նրան անվճար կերպով աշխատելու ֆեոդալական տիրույթներում: Աշխատանքային ռենտայի ժամանակ, «...Հողի անվանական սեփականատիրոջ համար կատարվող հավելյալ աշխատանքը նրանից կարող է քամվել միայն արտատնտեսական հարկադրանքով, ինչ ձևով էլ որ սա ընդունելիս լինի»²: Անդրադառնալով այս նույն պրոբլեմին, Վ. Ի. Լենինը գրել է. «Եթե կալվածատերն անմիջական իշխանություն չունենար գյուղացու անձի վրա, ապա նա չէր կարող հարկադրել իրեն համար աշխատելու այն մարդուն, որը հողաբաժին ունի և սեփական տնտեսություն է վարում»³:

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 15, էջ 87:

² Վ. Սաբս, Կապիտալ, հատ. 3, մասն 2-րդ, էջ 328—329:

³ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 324:

Ֆեոդալական հողային ռենտան Հայաստանում անցել է պատմական զարգացման երեք հիմնական ժամանակաշրջան: Առաջին շրջանում հարկերն ու տուրքերը փոխարինվում են նատուրալ բահրայով, իսկ ավելի հետո՝ կոռով: Ֆեոդալական շահագործման ամենապարզ և պրիմիտիվ ձևերը առկա էին նաև հին Հայաստանում, այսինքն այն պատմաշրջանում, երբ ձևավորվում էին հողի ֆեոդալական մասնավոր սեփականությունը և արտադրության ֆեոդալական հարաբերությունները:

Աշխատանքային հարկադիր, անվճար պարտավորություններ. և ուշ շրջանում աշխատանքային ռենտան, պատմական սկզբնաղբյուրներում՝ մատենագիրների երկերում, կանոնական որոշումներում, ձեռագիր հիշատակարաններում, վիմական արձանագրություններում և այլ բնույթի աշխատություններում հայտնի են «խաշար», «գուգազ», «մարդահարկ», «կոռ», «բեկար», «պարհարկ», «արտին կոռ», «կտուվար», «մարգո կոռ», «մարգին կոռ», «վեցկէ կոռ», «եզին կոռ», «սայլին կոռ», «կամին կոռ», «իշո կոռ» անուններով:

Ֆեոդալական հասարակարգի ժամանակաշրջանի պատմիչ Փ. Բուզանդը նկարագրելով Խոսրով թագավորի շինարարական ձեռնարկումները, վկայում է, որ «...նո հրաման թագաւորն զօրավարին իւրոյ՝ հանել խաշար յաշխարհէն բազում, և բերել զվայրենի կաղին մայրեաց, և տնկել զայն յայրարատեան գաւառին. և առեալ յամուր բերդին արքունի, որում կոչեն Դաունի...»¹:

Այս հատվածում «խաշարն» այն անվճար և հարկադիր պարհարկն է, որ երկրի բնակիչներն իրենց արտադրության միջոցներով և քաշող ուժով պարտավոր էին աշխատել թագավորական պալատ-դղյակների, անտառների և այլ կարգի աշխատանքների վրա:

Աներկբայելի է, որ «խաշարը» դեռ աշխատանքային ռենտա չէ, նա դեռ զուգակցված չէ և չի բխում հողի ֆեոդալական սեփականատիրական իրավունքից: Դժբախտաբար «խաշարի» մասին մենք այլ վկայություններ չունենք և մնում է ենթադրել, որ նա արքունիքի կարիքների համար գործադրված հարկադիր աշխատանք էր: Հարկադիր աշխատանքի իմաստով է գործածվել նաև «գուգազ» բառը:

Նույն պատմիչն այս առումով և նշանակությամբ հիշատակում է նաև «գուգազն»:

Մագթթաց Սանեսան արքան, հարում է Բուզանդը, հսկայական բանակով մտնում է Հայաստան: Պատերազմում սա պարտվում է Խոսրովից և ինքն էլ գերի է ընկնում:

Տալով այս դեպքերի ընդարձակ նկարագիրը, պատմիչն շարունակում է, որ պատերազմի դաշտում այնքան դիակ էր ընկած, որ «նեխէր երկիրն ի հոտոյ մեռելոցն»:

Հնարավոր համաճարակ հիվանդությունները կանխելու համար, Խոսրովը հրամայում է «Դուգազ հանել յաշխարհեն, և անդէն ծածկել քարակարկառ վիճօք, զի մի շարաւոյ հոտոյն մեռելտտի ոսկրացն երկիրն պղծեսցի»²: Անկասկած է, որ այս հատվածում մատնացույց արած «գուգազն» ունի հասարակական մասշտաբի հարկադիր և անվճար աշխատանքի իմաստ: Սակայն «գուգազի» ստուգաբանությունը այսօր անհայտ է չի սպառնում:

¹ Փ. Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, էջ 16, (Ընդդոմներն հեղինակին են):

² Նույն տեղում, էջ 16—17:

Ռազմական ամրոց-բերդեր, խրամատներ, ճանապարհներ կառուցելու, գործող բանակներին օգնելու համար նույնպես «գուգազ» էր հանվում: Խոսքով թագավորը, ասում է Բուզանդը, զբաղված էր շինարարական գործերով, բայց պարսկական հոծ բանակը մտնում է Հայաստան և խափանում նրա ձեռնարկումները: Պարսկական բանակին դիմադրելու համար ոչ միայն դուրս են գալիս հայկական ռազմական ուժերը, այլև «գուգազ»: Թագավորը կարգադրում է Բզնունաց Դադաբեն նահապետին «գուգազ հանել յաշխարհէ աւելի քան զչափն և զհամար զօրսն մատենիկ գնդաւն ընդ առաջ նոցա, խաղալ, հասանել ի դեմի հարկանել, արգելուլ զթշնամիսն»¹:

Այս հատվածում արդեն «գուգազն» ստանում է ռազմական պարտավորությունների իմաստ ու նշանակություն:

Արդեն ուշ միջնադարում, ֆեոդալական հարաբերությունների զարգացումը, ֆեոդալական տիրույթ-կալվածի հանդես գալը լուրջ և արմատական փոփոխություններ է մտցնում հարկադիր աշխատանքի իմաստի մեջ: Հարկադիր աշխատանքն անցնում է իմաստաբանական զարգացման նոր շրջան և հանդես է գալիս որպես հողի մասնատիրական իրավունքի բաղկացուցիչ մասը:

Աշխատանքային ռենտան կամ թե կոռային աշխատանքը քաղաքացիական իրավունք է ստանում եկեղեցական ժողովների կողմից մշակված պաշտոնական կանոններում:

Կոռի, որպես հողի հետ կապված ռենտայի, մասին առաջին վկայությունը պահպանված է 7-րդ դարում հրավիրված Դվինի ժողովի կանոններում:

Դվինի եկեղեցական ժողովը, տրտեղ հոգևոր ֆեոդալների հետ մասնակցում են նաև աշխարհիկ ֆեոդալները, մշակում է հատուկ կանոն արդեն չափն անցած կոռի մասին:

Դվինի ժողովի ԻԱ կանոնը դատապարտում է այն հողատեր-ֆեոդալներին, որոնք ոչ միայն չեն բավարարվում «ի վերայ տկարանոցաց իշխանութիւն» հաստատելով, այլև «որպէս ի կենդանեաց՝ հարկս պահանջեն և կերակուրս և յրմպելիս զիրանց գործակալս մատուցանեն, կռուով և պատուճասրի, նեղեն, զողորմելի եղբայրսն շարշարեն անխղճաբար...»²:

Այս կանոնը մեր առաջ բաց է անում տաժաճակիր աշխատանքի գործադրումը իր ամենաբիրտ ձևով:

Հայ ազատանին քամում էր ոչ միայն նյութական բարիքները արտադրողների հավելյալ արդյունքները, ոչ միայն իր գործակալների միջոցով հարկեր ու տուրքեր էր գանձում հողից, արտերից, հնձաններից, այլև ստիպում էր կոռ քաղել ֆեոդալական կալված-տիրույթներում: Հայ աշխատավոր գյուղացի-շինականը ոչ միայն կոռ էր կատարում սեփական շահագործող դասակարգի հողերի վրա, այլև պարսկական հետագա շրջանում նաև արաբական բռնակալների համար: Արաբական պատմիչ Տաբարին վկայում է, որ պարս-

¹ Փ. Բուզանդ, էջ 17:

² Կանոնադիրը հայոց, Թիֆլիս, 1913, էջ 127—128: Այս հոդվածում մատնացույց արված «կռուով և պատուճասիւ» բառերը, ինչպես համոզիչ կերպով ցույց է տվել տկադ. Հ. Մանանդյանը, աղճատվել են հետագա արտադրողների կողմից: Այս նույն կանոնը անփոփոխ մտել է Մ. Գոշի «Դատաստանագրութիւն», որտեղ «կռուով և պատուճասիւ» բառերը դործածված են իրենց իսկական նշանակությամբ՝ «կռուով և պարհակութեամբ» (տես Մ. Գոշ, Դատաստանագիրք, 1880, էջ 412, հմմտ. Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 208):

կական Պերոդ թագավորը հատուկ հրովարտակով դիմում է իր հպատակներին և խոստանում նրանց «ազատել հողային հարկից և գլխահարկից, հանրագում նպատակների համար ծանրություններից և կոռից, որ նրանց շնորհում է լիակատար ազատություն և հրամայում է, որ նրանք հոգան տւ մտածեն իրենց սննդի և պահպանության մասին»¹:

Աշխատանքային պարհարկներն ու պարտավորությունները հայտնի էին նաև «մարդահարկ», «գործ», «ծանրութիւն» անունների տակ: Ղևոնդը վկայում է, որ արաբական Եգիպտոստիկանը «մարդահարկի» միջոցով վերականգնում է Կարին — էրզրում քաղաքի ավերված տներն ու պարիսպները:

Եգիտն, ասում է պատմիչը, «երթայր հասանէր ի քաղաքն Կարնոյ և արկանէր մարդահարկ ի վերայ աշխարհին. և հաւաքեալ զբազմութիւն անթիւ կացուցանէր գործավարս ի վերայ գործոյն...»²:

Վ. Բարձրբերդցին վկայում է, որ Հուլավու խանը ձեռնարկում է «շինուածս ըստ սրտի իւրում», որի հետևանքով «տառապեցաւ երկիր՝ մարդ և անասուն փայտս ծանունս ի հեռաստանէ բերելով»³: Ար. Լաստիվերտցին երկու անգամ կոռի իմաստով գործածում է «մարդահարկ» և «գործ» բառերը:

Արխազների Բագրատ թագավորը արշավում է Բագրևանդ, տիրում է «բազում գաւառաց և բերդից և քաղաքաց»⁴: Այս վայրերում հասարակական անվճար աշխատանք կատարելու համար նա նշանակում է «գործակալ» և վերակացու»:

Այս «գործակալ-վերակացուններն» էին, որոնք «գործի», «ծանրութեան» և «մարդահարկի» միջոցով կազմակերպում և անցկացնում էին անվճար, հարկադիր աշխատանքները:

Որ «մարդահարկն» անվճար և հարկադիր աշխատանք էր, այդ առթիվ խիստ ուշագրավ վկայություն է թողել նույն պատմիչը: Գագիկ Բագրատունու օրոք բյուզանդական կայսրությունը Հայաստան է ուղարկում ոմն իշխանի, որ գալով Հայաստան, «մարդահարկ արկանէ յերկիրս. և ժողովեալ բազմութիւն մարդկան՝ սկիզբն առնէ վերստին շինելոյ զԹէոդուպոլիս»⁵:

Ինչպես նշվեց վերևում, աշխատանքային ունեւան կամ կոռը հանդես է գալիս և տիրապետող գիրք ստանում զարգացած ֆեոդալիզմի պատմաշրջանում կամ 9—13-րդ դարերում: Այս շրջանի պատմական սկզբնաղբյուրներում պահպանվել են բազմաքանակ և բազմազան վկայություններ այն մասին, որ անմիջական նյութական բարիքներ արտադրողները պարտավոր էին կատարել «մարդո կոռ»: Սևփական քաշող ուժ ունեցող գյուղացին տալիս էր «եզին կոռ»: Սովորական էր, երբ երկու կամ երեք լուծ եզներ ունեցող գյուղացին կատարում էր «վեցկէ կոռ»: Գյուղացին պարտավոր էր ձրի կալսելու տիրոջ հունձը, այս պարագային նրա կոռը կոչվում էր «կամին կոռ»: Գյուղացին պարտավոր էր իր փոխադրական միջոցներով դաշտից կալ և կալից մառան փոխադրել հացաբույսերը, խոտը, հարդը: Այս կոռն հայտնի էր «սայլին կոռ» անվան տակ:

Ահա այս կարգի բազմաթիվ վկայություններից միայն մի քանիսը: 9-րդ դարում Գտկա վանքն այցի է դալիս Աշոտ Բագրատունի իշխանը: Նա արձա-

¹ Th. Noeldeke, Tabari, Leyden, 1879, էջ 112:

² Ղևոնդ, Պատմութիւն, 1887, էջ 120—130:

³ Վ. Բարձրբերդցի, Պատմութիւն տիեզերական, 1861, էջ 100. հմտ. Կ. Գանձակեցի, էջ 380—381:

⁴ Ալ. Լաստիվերցի, Պատմութիւն հայոց, 1912, էջ 5, 11:

նագրել է տալիս, որ իր «Հայալ զանձով» կառուցում է հյուրատուն և «հաստատ գրով» հյուրատանն է նվիրում մեկ այգի:

Այնտեղտեղ հիշատակվում է, որ իշխանի կարգադրությամբ համաձայն, վանքապատկան հողերն ու այգիները մշակելու համար, վանքի շրջապատի գյուղերից մեկը յուրաքանչյուր տարի հարկագիր կերպով պարտավորվում է դուրս բերել «յիսուն վեցկէ և հարիւր այր», վանքին ավելի մոտ գտնվող Ղաղզուան գյուղաքաղաք՝ «հարիւր վեցկէ և երկհարիւր այր»¹։ Այսպիսով միայն երկու գյուղեր յուրաքանչյուր տարի վանքին են տրամադրում 150 վեցկէ լուծ գութան և 300 աշխատող ձեռքեր:

Մյուսյաց իշխան Սափանը 901 թ. արձանագրով կոթ գյուղը և նրա «բազում սպասավորներին» ազատում է «յարքունական ծանրութենէ և բեկարէ» սահմանում է այն հողերն ու ջրերը, որոնք ազատվում են կոռից²:

Վիմական արձանագրություններում կան ավելի պարզ և որոշ վկայություններ կոռի մասին իր իսկական իմաստով գործածված:

Մրենի 992 թ. արձանագրության մեջ հիշատակված է, որ Գագիկ Շահրնշահը ազատում է «զՄենտյ կոռն... զմարդոյ և զեզին...»³:

Կոռն իր բազմազան տեսակներով արձանագրված է Չուգավանի 1325 թվի արձանագրության մեջ: Ոմն Սատրիկ Բահագին և Ավդուա տալիս են արձանագրել, որը նրանք վերցնում են «զվանաց կոռս զմարդո, եզին, ըշո, զամենայն ցեղ կոռ...»⁴:

Մարդու, ձիու, եզի, ջորու, էշի, կամի, սայլի և «զամենայն ցեղ» կոռի մասին ուշագրավ հոգվածներ են սահմանել Մխիթար Գոշր և Սմբատ Գունդեստաբլն իրենց «Դատաստանագրքեր»-ում:

«Այսպէս և յաւուրս շաբաթու յեօթնէ մին գործիցի իշխանի և տէրինի, սահմանել է Գոշր, այլ աւելի աշխատելն՝ զձեռամբ անկեալն՝ անիրաւութիւն մեծ է»:

Եզներին, ասում է Գոշր, առանձին այլ հարկի չպետք է ենթարկել, որովհետեւ նրանք աշխատել են «հնգեակի» ժամանակ, ձիերին և էշերին նույնպես հարկի չպետք է ենթարկել, քանի որ նրանք «բազում անգամ» ծառայել են «զտերունիսն»⁵:

Սովորական և տիրող կարծիք է, որ իբր Մ. Գոշր և Սմ. Գունդեստաբլը թողել են վկայություն միայն մեկ օրվա կոռի մասին: Այս դրույթը չի ապացուցվում օրենսդիրների կանոնադրքի ուշադիր քննարկումից: Եթե կոռային աշխատանքը չխլեր գյուղացու շաբաթվա աշխատանքի զգալի մասը, ապա անիմաստ էր այդ առթիվ հատուկ կանոններ սահմանել:

Մ. Գոշի մոտ կան այլ կանոններ, որտեղ դատապարտվում են այն տերերը, որոնք խախտում են սովորույթների և տրագիցիաների ուժով սահմանված կոռային աշխատանքի ժամանակը և ստիպում են իրենց հպատակներին աշխատել նույնիսկ տոն օրերը⁶:

¹ Գաւ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց Հայոց, էջ 7:

² Վիմական տարեգիր, էջ 1—3. հմտ. Ս. Սրբելյան, Պատմութիւն... էջ 177—178:

³ Նույն տեղում, էջ 10—11, հմտ. Ալիշան, Շիրակ, էջ 138:

⁴ Նույն տեղում, էջ 161 (Ընդգծումներն հեղինակինն են—Ս. Հ.):

⁵ Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 315—316, հմտ. Սմ. Գունդեստաբլ, Դատաստանագիրք, էջ 18—19:

⁶ Նույն տեղում, էջ 316:

հացի այս ուղղակի ցուցումներից, կան այլ կողմնակի վկայություններ կոռային աշխատանքի մեծ չափերի մասին:

Վարդան և Գրիգոր վարդապետները իրենց «Համառոտ մեկնությունը գրոցն առաքելոցն» աշխատությունում, առաքելներից մեջ բերած կրոնա-բարոյական քարոզներով աշխատում են համոզել «չար», «տմարդի» տերերին, իշխաններին սահմանափակել հարկադիր, անվճար աշխատանքի ժամանակը: Այդ աշխատության ԳԹ. կանոնում ասված է. «Վեց օր գործեսցեն զգործ քո, և յաւուրն եօթերորդի հանգիցէ եզն քո, և էջ քո, ծառայք քո, և աղախին քո»¹: Վարդան Այգեկցին իր քարոզներից մեկում դատապարտում է այն «չար» և «ազա՛» տերերին, որոնք շաբաթվա բոլոր օրերում շահագործում են հողակտորներն ու աշխատամիջոցները կորցրած գյուղացի-վարձկաններին: «Վարձկանն,— ասում է Վարդանը,— մտանէ ի տուն քո և խոնարացուցանէ զսուր իր ի գործոյ քո, վեց օր ոչ իշխէ ի վեր հայել և տեսանել զարեգակն թէ ուստի գայ և ուր երթայ. այլ ջան եգեալ փութայ ի գործ քո, և ի քրտինք, և ի վաստակ և յաշխատութիւնին, և ոչ ոք տայ ի վեր հայել և հանգչել»²:

Արդյո՞ք մենք հիմքեր ունենք ենթադրելու, որ այս հատվածներում հիշատակված կոռային աշխատանքը կատարում էին նյութական բարիքներ արտադրողները: Այո, կան: Դավիթ Ալավկա Որդին, Մ. Գոշը, Սմ. Գունդստաբլը մշակել են հատուկ կանոններ կոռային աշխատանքի բնույթի մասին: Հողատեր-ֆեոդալները, մեծատուն-իշխանները իրենց հպատակների մի մասին ուղարկում էին «ի գործ մշակութեան», մյուսներին՝ «յայգեգործութեան», երրորդներին «զինուորութեան», իսկ մի մասին Բլ՝ «ի յայլ գործ»:

Աշխատանքային ռեստայի կամ կոռի մասին ուշագրավ վկայություն է թողել Շնորհալին իր «Թուղթ ընդհանրական» աշխատության մեջ: «Առ իշխանս՝ որ ըստ աշխարհի» ենթադրում, Շնորհալին դառն վշտով է նկարագրում հայ հասարակության շահագործվող տարբեր խավերի և դասերի ողբերգական գոյավիճակը: Դիմելով «աշխարհի տերերին», Շնորհալին հարում է. «Մի անիրաւաբար վարիք առ հնազանդեալսդ ծանր և դժուարակիր հարկադրութեամբ՝ զոր ոչ կարեն բառնալ... Մի որպէս զանբան կենդանի՝ որ բնութեամբ ծառայք են մարդկան, ծառայեցուցանէ՛ք զմարդիկ՝ որ ընդ իշխանութեամբ ձերով լինին ի զործ խիստ և աննեւելի... Մի շար և անիրաւ գործակալս և զաւառապետս կացուցանէք ի վերայ աշխարհի ձերոյ...»³, Հասկանալի է, որ այս «չար ու անիրաւ» գործակալ-զավառապետները ոչ միայն հարկեր ու տուրքեր էին հավաքում, այլև կազմակերպում էին կոռային աշխատանքը:

Մենք ունենք արժանահավատ վկայություններ այն մասին, որ կոռային աշխատանք էին կատարում ոչ միայն առանձին մարդիկ, այլև աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներին ենթակա գյուղերի ողջ բնակչությունը: Ատ. Օրբելյանի «Ժամանակագրության» հավելվածում պահպանվել է արժեքավոր վկայություններ ֆեոդալական կախման վիճակում դրված գյուղերի հասարակական մասշտաբի հարկադիր՝ կոռային աշխատանքի մասին:

Այս «Ժամանակագրութիւնն», ինչպես նաև Տաթևի վանքին ենթակա գյու-

¹ Համառոտ մեկնությունը գրոցն առաքելոց, հաւաքեալ ի մեկնութիւնք Վարդանայ վարդապետի առն հարդելի և իմաստոյ աշխատութեամբ Գրիգորի վարդապետի. Ժողովուրդ, № 1054, էջ 71 ր:

² Ձեռագիր № 629, էջ 71 ա:

³ Ն. Շնորհալի, Թուղթ ընդհանրական, էջ 93—94:

ղերի հարկացուցակը կազմված է, ինչպես մատնացույց է անում պատմիչը, «ըստ հին սահմանաց»: Հայտնի է, որ Սյունյաց գավառների վարչական կազմը 12—13-րդ դարերում ենթարկվում է որոշակի փոփոխության: Եթե «հարկացուցակը» կազմված լիներ այս շրջանում, և անկասկած է, որ նրա մեջ պետք է տեղ գտնին վարչական փոփոխությունները. բացի այդ, «հարկացուցակում» չի հիշատակվում 1006 թ. հետո Սյունիքի կազմում մտած այնպիսի խոշոր քաղաք, ինչպիսին է Նախիջևանը: Հետևաբար և՛ «Ժամանակագրութիւնն» և՛ «հարկացուցակը» կազմված պետք է լինեն ոչ ուշ քան 10-րդ դարում, այսինքն մեր քննարկմանը ենթակա պատմաշրջանում: «Ժամանակագրութիւնն» պահպանել է վկայություն Տաթևին ենթակա գյուղերի կոռային աշխատանքի մասին, մինչև այդ մեղ հայտնի բոլոր վկայություններից ամենից հավաստի տեղեկությունները:

Այս փաստաթղթում թվարկվում են այն բոլոր հարկերն ու տուրքերը, որոնք պարտավոր էին Տաթևի վանքին վճարել հարկատու գյուղացիները և գյուղերը: Սակայն մեզ չգրադեցնող հարցի առնչությամբ խիստ ուշագրավ է կոռի մասին եղած հատվածները: Տաթև գյուղի բնակիչները պարտադիր կերպով պետք է՝ «գլխովին բոլոր գեղովն մեկ օր վար անեն, Խ. օր հունձ անեն, և մեկ օր ալ ջառ անեն ինչ բան որ լինի. և մեկ օր էլ եզնարածն վանքիս համար խոտ հարեն»:

Ապա հաջորդաբար թվարկվում են նաև այլ գյուղերը և յուրաքանչյուր գյուղի համար սահմանվում է համարյա նույն կոռային աշխատանքը: Մի դեպքում վայրը սահմանվում է մեկ, մյուս դեպքում երկու, հունձը երկու կամ երեք. ջառը մեկ կամ երկու, և այլ օրեր¹: Այս և վերոհիշյալ վկայությունները այլևս ոչ մի կասկած չեն հարուցում, որ միջնադարյան Հայաստանում կոռը խլել է գյուղացու աշխատանքի մեծ մասը: Որ միջնադարյան ֆեոդալական Հայաստանում կոռը լայն տարածում էր գտել, այդ մասին են վկայում նաև սկզբնաղբյուրներում պահպանված «կոռավար հող», «կոռավար արտ», «կոռավար մարգ» և «մեծ կոռավար» տերմինները:

Հառիճի վանքի 1201 թ. արձանագրության մեջ հիշատակված է, որ Ամիրսպասալար շաքարեն հաստատում է վանքի բուն տիրույթները և վանքին է նվիրում «ի Սահմանախաչէ» մինչև «ի Հառիճա գետն» «կոռ Մարգով, Գրերովն, Յամաք Ձորով, Ծինարին Հարով, Գումեցեց ձորովն, Արենաղբերով, հին Հառիճայով...»: Դսեղի 1237 թվի արձանագրությունով Գուրգեն իշխանի Աշոտ որդին վանքին վախժ է անում «Երկու մեծ կոռավար հող...»: Գրիգոր իշխանը նույն վանքին վախժ է անում «Սիրակայ գումաց տափն և մեծ կոռաւարն Ադարակի Փայտաշէնու կէսն...»: Սիոնի 1283 թվի արձանագրությունով «մեծաշուք պարոն» Վահրամը վանքին նվիրում է «գժարաթաղին այգին վերին հատովն... կոռ արտով...»²:

«Կոռավարի» մասին ուշագրավ վկայություններ ունի Ստ. Օրբելյանը:

¹ Լե. Աբրահամյան, Ստ. Օրբելյանի «Ժամանակագրութիւնն», էջ 44: Հմտ. ձեռագիր № 1480, էջ 213 ա, 213 բ, 214 ա և ուրիշներ:

² Վիմական տարեգիր, էջ 43, 80, 83, 123—124. Հմտ. նաև Մխչթարեանց Ար. վ. պատմութիւն Մենաստանին Հառիճոյ, Տփլիս, 1885, էջ 62, Ալիբեան, Շիրակ, էջ 161, Շահ-խաթունեանց Յովհ. եպ. Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառաց Արարտայ, հատ. 2, էջ 568:

Պատմիչն ասում է, որ Սյունյաց Սողոմոն եպիսկոպոսը գիմում է բոլոր միջոցներին և վանքին է վերադարձնում «զնոսոյ» գյուղի «կոռավարն»¹։

Հայ խոշոր հողատեր-ֆեոդալները, իշխանները, մեծատունները վանքերին և եկեղեցիներին նվիրում են ոչ միայն գյուղեր, այգիներ, արտեր, մարգեր, այլև պարտադրում են իրենց ենթակա գյուղերի բնակիչներին կատարել կոռ։ Այսպիսով, նոր տերերին էին անցնում ոչ միայն հողեր, այլև անվճար աշխատանքային ունեւան։

Աշխատանքային ունեւանի մեջ էր իմաստավորված նաև «բեկար» կամ «բիգար» հարկադիր ու ձրի աշխատանքը։

Հասարակական մասշտաբի հարկադիր աշխատանք արտահայտող այս տերմինը պատմական հին անցյալ ունի։ Նրա մասին կան առանձին հիշատակություններ Սասանյան Պարսկաստանի գերիշխանության շրջանում։ Սակայն «բեկար» տերմինը նույնպես քաղաքացիական իրավունք է ստանում միայն 7-րդ դարից սկսած։

Եթե կոռը կապված էր հողի մասնավոր սեփականության հետ, ապա «բեկարն» այն հարկադիր և անվճար աշխատանքն էր, որ նյութական բարիքներ արտադրողները իրենց սեփական աշխատամիջոցներով և քաշող ուժերով գործադրում էին հասարակական բնույթի աշխատանքների վրա։ «Բեկարի» միջոցով կառուցվում էին արքունական պալատներ, վանքեր, եկեղեցիներ, բերդեր, կամուրջներ, ամրոցներ, անցկացնում էին ճանապարհներ, ջրանցքներ, վերակառուցում էին քաղաքներ և այլն։

«Բեկար» բառը պատմական գրականության մեջ ստուգաբանված է տարբեր առումով ու նշանակությամբ։ Պրոֆ. Ն. Ադոնցը գտել է, որ «բեկար» բառը ծագել է պարսկական *bekar amāvan* արտահայտությունից և նշանակել է զինվ աշխատանքի և կոռի իմաստով էլ մինչև օրս գործածական է ժողովրդի մեջ։ «Բեկորն» իսկական իր իմաստով կոչվել է պարհարկ-kar, հայերեն կոռ-աշխատանք, հաճախակի կոռ և բեկար²։ Ակադ. Հ. Մանանդյանը մերժելով Ն. Ադոնցի ստուգաբանությունը, նշել է, որ «բեկար կարող են լինել կամ արքունի հարկ, հավանորեն հողային, կամ զինվորական ծառայության պարտավորություն»³։ Ակադ. ակադ. Հ. Աճառյանը, Ստ. Մալխասյանը «բեկարը» համարել են հարկ, պետությանը վճարած տուրք կամ պարտադիր ծառայություն, որ կատարում էին գյուղացիները կալվածատիրոջ կամ պետության համար, ինչպես հողի մշակություն, հունձ և այլն⁴։ Գարեգին Հովսեփյանը, իր «Ձագաւանից ժողովը» հոդվածում, բեկարը համարում է արքունիքի համար կատարվող հարկադիր և անվճար աշխատանք⁵։

Պրոֆ. Ի. Պ. Պետրոսյանը մատնացույց է անում, որ «բեկարն», որպես հարկադիր աշխատանք գոյություն է ունեցել Սասանյան Պարսկաստանում։ Մարզպանական Հայաստանում «Բեկարն» ամեն տեսակի պարհարկն էր,

¹ Ստ. Սրբեյան, էջ 215։

² Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 484.

³ Հ. Մանանդյան, Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում (ՏԵՍ «Տեղեկագիր» Հայկական ՍՍՏ Գիտության և արվեստի ինստիտուտի, Երևան, 1926, № 1, էջ 37)։

⁴ Հ. Աճառյան, Արմատական բառարան, հատ. I, էջ 1053—1054, Ստ. Մալխասյանց, Բացատրական բառարան, հատ. I, էջ 358։

⁵ Գարեգին Հովսեփյան, Ձագաւանից ժողովը (տես «Շողակաթ», 1913, էջ 36)։

պարտադիր աշխատանք, որ գործադրվում էր դոյակներ, ամրոցներ, ջրանցքներ, առուներ կառուցելու համար¹:

Ն. Բերձենիշվիլին, ընդհակառակը, գտնում է, որ «բեկարն» վրացներեն լեզվում ստացել է «բեգարա» իմաստը և նշանակել է արդյունավետ ռենտա²: Ակնհայտ է, որ այս բաղմաթիվ, խիստ հետաքրքրական, բայց մեկը մյուսին բացասող կարծիքները խճողել են «բեգարի» իմաստն ու նշանակությունը: Հայկական պատմական աղբյուրներում «բեգար» բառի մեջ իմաստավորված է հասարակական մասշտաբի անվտանգ աշխատանքն իր բաղմազան ձևով:

7-րդ դարի Դվինի ժողովի 8-րդ կանոնում ամենից լավ է մեկնաբանված «բեկարի» իմաստը: Այստեղ արձանագրված է, որ եթե հոգևոր դասի որևէ ներկայացուցիչ որդեգրվում է այս կամ այն անձնավորությունը, ապա վերջինս ազատվում է «ի հարկէ և ի բեկարէ»³: Եթե «բեկարն» հողային կամ որևէ այլ հարկ լիներ ապա անիմաստ էր եկեղեցու ժառանգավորին ազատել և՛ հարկից և՛ բեկարից: Ուրեմն «բեկարը» հարկ չէր, այլ հարկադիր աշխատանք: Սյունյաց Սահան իշխանը Կոթ գյուղը ազատում է «յարքունական ծանրութենէ և ի բեկարէ...»⁴:

Հովհ. Դրասխանակերտցին խիստ սահմանագիծ է անցկացնում «արքունի հարկի» և «բեկարի» միջև: Գագիկ Արծրունին, հարում է պատմիչը, արաբական ոստիկան Յուսուֆին վճարում է ոչ միայն «զսակ հարկին», այլև կազմակերպում է «զամենայն բեկարս արքունի»⁵: Արաբական ամիրապետի հրամանով Աշոտ Բագրատունին հաստատվում է ոչ միայն հարկերի, այլև «զամենայն բեկար արքունի» վերակացու: Ուշագրավ է, որ նույն մատենագիրը «արքունի բեկարն» համարում է «արքունի լուծ»⁶:

Մ. Գոշն իր «Դատաստանագրքում» երկու անգամ գործածում է «բեկար», «անպեկար» տերմինները և երկու դեպքում էլ օգտագործում է Դվինի ժողովի 8 և 9-րդ կանոնները: Մ. Գոշը սահմանում է, որ եկեղեցիների ժառանգները դառնում են «անհարկ և անպեկար»: Օրենսդիրը բողոքում է, որ եկեղեցու ազատարարությունը, նրա հողերն ու ջրերը չնայած պարսկական տիրապետության օրոք «խառնեալ» չէր «ի շինականս», սակայն ենթակա էր «ի պեկար» արքունի հարկադիր աշխատանքի⁸: Աներկբայելի է, որ այս բոլոր հատվածներում «բեկարը» գործածվում է ոչ թե հողային հարկի, գլխահարկի, զինվորական ծառայության պարտավորության, արդյունքային ռենտայի, այլ միայն հասարակական մասշտաբի հարկադիր ու ձրի աշխատանքի իմաստով ու նշանակությամբ:

Այսպիսով, սկսած պատմական հին շրջանից աշխատավորական գյուղացիները ոչ միայն վճարում էին հարկեր ու տուրքեր, այլև կատարում էին «կոռ» ու «բեկար»: Սակայն աշխատանքային ռենտան պատմական բոլոր շրջաններում միևնույն իմաստը չունենր:

¹ И. П. Петрушевский, Очерки истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX—вв., 1949, стр. 285.

² Н. А. Бердзенишвили, Очерк из истории развития феодальных отношений в Грузии, Тифлис, 1938, стр. 17.

³ Կանոնգիրք հայոց, էջ 124—125:

⁴ Վիմական տարեգիր, էջ 4. հմտ. Աս. Որբելյան, էջ 178:

⁵ Հով. Դրասխանակերտցի, էջ 330:

⁶ Նույն տեղում, էջ 133:

⁷ Նույն տեղում, էջ 161—162:

⁸ ՏԵՍ Մ. Գոշ, էջ 212:

Եթե վաղ ֆեոդալիզմի դարաշրջանում գյուղացին կատարում էր հասարակական նշանակություն ունեցող աշխատանք, կատարում էր «խաշար», «գուգազ», ապա զարգացած ֆեոդալիզմի պայմաններում, ինչպես նկատելի է, փոխված է հարկադիր աշխատանքի բնույթը և աշխատավճար ունեւան հանդես է գալիս իր իսկական առումով և նշանակությամբ:

II. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՌԵՆՏԱ

Ֆեոդալական հասարակական-տնտեսական ֆորմացիայի արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների հետագա զարգացումը ստեղծում է տնտեսական նախադրյալներ աշխատանքային ունեւայի փոխարկման արդյունքային ունեւայի: Սակայն «աշխատանքային ունեւայի փոխարկումն արդյունքներով ունեւայի, տնտեսագիտական տեսակետից քննելով, ոչինչ չի փոխում հողային ունեւայի էության մեջ»¹: Չնայած արդյունքներով ունեւայի տիրապետության շրջանում ֆեոդալական հողային ունեւայի էությունը մնում է նույնը, սակայն այս պարագային գյուղացին մեծ հնարավորություն է ստանում իր բանվորական ուժի մի մասը գործադրել իր հողակտորի մշակման, իր սեփական տնտեսության վերարտադրության հնարավորությունները ընդարձակելու համար: Արդյունքային ունեւայի ժամանակ էլ «հայտնի կոոերը շարունակում են հարատեւել արդյունքներով ունեւայի կողքին»²: Եվ վերջապես, արդյունքներով ունեւան ենթադրում է անմիջական արտադրողի ավելի բարձր մակարդակ, հետեաբար գյուղացու աշխատանքի և ընդհանրապես հասարակության զարգացման ավելի բարձր աստիճան: Այս ունեւայի ժամանակ գյուղացին իր աշխատանքը չի կատարում հարկադրաբար, ընդհակառակը, նա աշխատանքը կատարում է ստեղծված հարաբերությունների ուժից մղված, իր անձնական պատասխանատվությամբ:

Ինչպես աշխատանքային, այնպես էլ արդյունքներով ունեւան անցել է իմաստաբանական զարգացման տարբեր շրջաններ:

Հին Հայաստանում անմիջական նյութական բարիքներ արտադրողները վճարել են հարկեր և տուրքեր ինչպես սեփական, այնպես էլ օտար հողատեր ֆեոդալներին: Սակայն միջին դարերում, զարգացած ֆեոդալական հարաբերությունների պայմաններում հարկերն ու տուրքերը ստացել են արդյունքներով ունեւայի նշանակություն:

Արդյունքներով ունեւան իր մեջ իմաստավորել է ինչպես արքունական կամ պետական հարկերն ու տուրքերը, այնպես էլ հողատեր-ֆեոդալներին վճարված բնամթերքները: Մենք այստեղ հնարավորություն չունենք հանգամանորեն շարադրել այն հարկերն ու տուրքերը, որ գյուղացի-շինականները վճարել են հայկական կենտրոնացած պետությանը, Հռոմին, Պարսկաստանին, Բուզանդիային, արաբներին, սելջուկներին, մոնղոլներին: Այս հարցին անդրադառնալու ենք մի այլ հոդվածով: Այս մասում գլխավորապես կանդ ենք առնելու 10—13-րդ դարերում հանդես եկած արդյունքներով ունեւայի վրա:

10—13-րդ դարերում Հայաստանի ողջ էկոնոմիկայում տեղի են ունենում կարևոր տեղաշարժեր ու փոփոխություններ:

Այս պատմաշրջանում ձևավորված է ֆեոդալական կալված-տիրություն:

¹ Կ. Սաբև, *Կապիտալ, հատ. 3, մասն 2-րդ, էջ 332*:

² Նույն տեղում, էջ 332—333:

Երկրի արտադրողական ուժերն ապրում են զարգացման նոր շրջան, խորանում է աշխատանքի հասարակական բաժանումը, զարգանում են քաղաքներն ու քաղաքային կյանքը, արհեստային արտադրությունը, ներքին և արտաքին շուկայական հարաբերությունները, ապրանքափոխանակությունն ու դրամական շրջանառությունը:

Հողատեր ֆեոդալները, բազմաքանակ մեծատոմսները, առևտրավաշխառական դասին պատկանող մարդիկ, ֆեոդալական եկեղեցիներն ու վանքերը ավելի շատ արդյունքներ ստանալու համար անցկացնում են արհեստական ջրանցքներ, անջրդի հողերը դարձնում են ջրարբի, վարելահողերը. դաշտերը, այգիները պարարտացնում են, մաքրում են մոլախոտերից, զարկ են տալիս այգեգործությանը, կուլտուրական բույսերի մշակույթին: Միայն այս պայմաններում է, որ արդյունքներով ռենտան հանդես է գալիս որպես հողային ռենտայի իշխող և տիրապետող ձևը: Մատենագրական տարբեր բնույթի աղբյուրների, ձեռագիր հիշատակարանների, վիմական արձանագրությունների, կանոնական որոշումների, դատաստանագրքերի, քաղաքական-գեղարվեստական գրականության և այլ կարգի աղբյուրների հետազոտությունը և բաղդատումը հնարավորություն են տալիս ապացուցելու, որ 10—13-րդ դարերում՝ արքունական-պետական, իշխանական-ֆեոդալական, վանական և եկեղեցական «հայրենիք», «պարգևականք», «գանձագինք», «քսակագինք», «դրամագինք», «հալալ ընչիւք» գնված կալված-տիրույթներին ամրացված և հատկապես հարկատու բնակիչները վճարել են շուրջ 30 տեսակի հարկեր, տուրքեր և կատարել են ֆեոդալական այլ պարհարկներ:

Բագրատունիների գերիշխանության օրոք նյութական բարիքներ արտադրողները արքունական հարկերը վճարել են թե՛ արդյունքներով և թե՛ դրամով: Հովհ. Դրասխանակերտցին ասում է, որ երբ Սմբատ Բագրատունի թագավորը գրավում է արաբներից Դվինը, ստիպում է քաղաքի բնակիչներին «ի ծառայութիմս... և զսակ արքունի հարկաց» վճարել: Արքունական հարկ չվճարելը դիտվում է որպես պետական հանցագործություն: Գագիկ Արծրունու դեմ ապստամբվում են իր թագավորության հյուսիսային սահմանների վրա բնակություն հաստատած «խժականաց և անզղեստիք ատեցողաց» ցեղերին և դադարում են վճարել «արքունի» հարկերը²: Ստ. Տարոնցին տալով Գագիկ Բագրատունի թագավորի գործունեության պատմությունը, ասում է, որ նա գրավում է «յուրով» բերդեր, ամրոցներ, գավառներ և սրանց բնակիչներին ազատում է արքունական «զբաժ» կոչված հարկից³: Սամուել Անեցին վկայում է, որ ժողովրդից հավաքված հարկերը «թագաւորացն է»⁴:

Արքունիքին վճարվող հարկերի մասին բազմաթիվ վկայություններ են թողել Թ. Արծրունին, Ն. Շնորհալին, Ստ. Օրբելյանը, Կ. Գանձակեցին, Մ. Գոշր և ուրիշները⁵: Արքունի հարկերը բազմաթիվ և բազմազան էին և հայտնի էին տարբեր անունների տակ:

¹ Հովհ. Դրասխանակերտցի, էջ 160:

² Նույն տեղում, էջ 324, 348:

³ Ստ. Տարոնցի, էջ 258:

⁴ Ս. Անեցի, էջ 199:

⁵ Թ. Արծրունի, էջ 236—237, 245—246, 247—249. Ն. Շնորհալի, էջ 96—97. Ստ. Օրբելյան, էջ 269—270, 299, 307, 331, 357, Կ. Գանձակեցի, էջ 154—157, Մ. Գոշր, էջ 193—194, 215—217, 306—307, 310—314, 316, 318 և ուրիշներ:

1. «Չար», «արհուճի չար», «անչար», «անչարություն»,
«բերդաչար», «մեծ» և «փոքր» չար»

Արքունական հարկ էր նաև «չարը», Հարկային այս տերմինը խիստ դժվար է ստուգաբանության ենթարկվում: Սկզբնաղբյուրներում «չարի» մասին պահպանված վկայությունների ուշադիր քննարկումը առայժմ հնարավորություն է տալիս միայն մի քանի հավանական ենթադրություններ և կոահումներ կատարել:

«Չարն» որպես հողային և այն էլ արքունական հարկ մատնացույց է արված հետևյալ վկայություններում:

Սյունյաց Սևադա իշխանի Շահանդուխտ դուստրը Տաթևի վանքին վախժ է անում իր «հալալ գանձով» դնած Տեղ գյուղը և արձանագրել է տալիս, որ այսուհետև ոչ ոք իրավունք չունի հետ խել կամ «չար և կամ այլ ինչ արքունի հարկ ի վերայ դնել»¹: Անկասկած է, որ այս հատվածում «չարը» արքունի հարկ էր: Սյունյաց Սմբատ իշխանը նույն վանքին նվիրում է Գրուկ գյուղը «իւր բոլոր սահմանովն... աղատ ամենայն շարէ և հարկաց...»²:

Սյունյաց Աշոտ իշխանը վանքին է նվիրում Ամբրավաքար գյուղը և թողնում հիշատակություն այն մասին, որ ոչ ոք իրավունք չունի խախտել իր կտակը և «չար և հարկ ի վերայ (գյուղի) դնէ...»³:

Արքունական «չար» կոչված հարկից աղատվում էին այն բոլոր գյուղերը, որոնք որպես անխախտ «ժառանգութիւն» հանձնվում էին եկեղեցիներին ու վանքերին: Ստ. Օրբելյանը Տաթևին է նվիրում իր «հոգոյ մասն և բաժին» Չովա գյուղը «յազատ յամէն աշխարհական հարկաց ի դիւանէ, ի խալանէ և յամէն շարէ...»⁴: Հոռոմոսի վանքին ումն Անագուլլես նվիրում է իր հողերն «ազատ յամէն շարէ...»⁵: «Չար» հարկը դանձվել է ոչ միայն գյուղերից, այլև վարելահողերից, այգիներից, ձիթահանքներից, աղահանքներից և արտադրական տնտեսական բնույթի այլ ձեռնարկություններից: Գագիկ Շահնշահի Հովհաննես որդին Հոռոմոսի վանքին վախժ է անում Կողրի իր այգին «ազատ ամենայն շարէ...»⁶: Սմբատ իշխանը 'Խադի վանքին է նվիրում այգիներ, ձիթահանք և այլ «արդիւնքս», Կանաչավոր գյուղը և թողնում է հիշատակություն այն մասին, որ այդ բոլոր նվերները նա հանձնում է վանքին «ամեն խաբնովն անչար...»⁷: «Չար» արքունի հարկի ենթակա էին նաև աղահանքերը: Ոմն Հովհաննես իշխան Հոռոմոսի վանքին տալիս է «Ճ (100) բեռն աղ յամենայն ամի ուղատ յամենայն շարէ...»⁸:

Հաճախակի են դեպքերը, երբ հողեւոր ֆեոդալներին հանձնած հողերը դառնում են «անչար», Օրբելյան Սմբատ իշխանը Հերերի եկեղեցուն նվիրում է «դ՛ուրինքթին հողն... անչարարութեամբ...»⁹:

¹ Ստ. Օրբելյան, էջ 291—292, հմտ. նաև Տեղ-Սուխայան, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հողարձնի և Դաղավանքի եկեղեցիները և վանական շինարարությունները, Երևանագիտ, 1938, էջ 232:

² Նույն տեղում, էջ 306—307:

³ Նույն տեղում, էջ 331:

⁴ Վիմական տարեգիր, էջ 137:

⁵ Նույն տեղում, էջ 91:

⁶ Նույն տեղում, էջ 21:

⁷ Նույն տեղում, էջ 107:

⁸ Նույն տեղում, էջ 21:

⁹ Նույն տեղում, էջ 158:

Ուն Աշոտ Դսեղի վանքին նվիրում է իր կայքը, հողերը «ազատ Կալենայն շարէ»¹: «Չար հարկը գանձվում էր բերդերից և ամրոցներից: Այս «չարը» հայտնի էր խիստ բնորոշ «բերդաշար» անվան տակ»²: Սկզբնաղբյուրներում կան մի շարք վկայություններ, որ վանքերին ու եկեղեցիներին անցած կալվածները միայն մի մասն էր ազատվում «չարից»³:

Աներկբայելի է, որ այս բոլոր վկայություններում «չարն» հանգես է գալիս որպես արքունական հարկ: Սակայն «չարն» ոչ միայն արքունի, այլև ընդհանրապես հողային հարկ էր և նույնիսկ գլխահարկ:

«Չար» էր կոչվում նաև անասնահարկը և ղինվորական պարտավորությունները: Կար և «մեծ» և «փոքր շար»: Շիրակավանի մեկ արձանագրության մեջ հիշատակված է, որ գյուղի տանուտերները, անասուններին, ավելի ճիշտ, եզներին ազատում են «մեծ և փոքր շար» կոչվող հարկից⁴: «Չարն» նաև գլխահարկ էր: Այդ առթիվ կան համապատասխան վկայություններ: Սյունյաց Սահան իշխանը Կաթի վանքի սպասավորներին ազատում է «յամենայն արժույթի շարէ...»⁵:

Այսպիսով «չարի» մասին պահպանված բոլոր վկայությունների ուշադիր քննարկումը, հնարավորություն է տալիս ենթադրել, որ նա գանձվել է գյուղերից, հողերից, այգիներից, դաշտերից, ամրոց-բերդերից, ձիթհանքներից, աղահանքերից, ձկնորսարաններից, գետերից ու լճերից, կուղպակ-խանութներից, իջևան-քարվանսարաններից: «Չարը» գանձվում էր նաև ռազմական ուժերը պահպանելու և մատակարարելու համար:

Ամենայն հավանականությամբ «չար» տերմինը իր նշանակությամբ համընկնում էր պարսկական «չհար» տերմինի հետ և նշանակում էր հարկերի և տուրքերի 1/4 մասը, որին ենթակա էին հարկատու բոլոր յբյեկտները:

2. «Արժունական նեպակ» կամ «նեպուկ»: Կենտրոնական պետությունը արդյունքներով և դրամով վճարող հարկերի և տուրքերի մի մասն էլ հայտնի է «նեպակ» կամ «նեպուկ» անվան տակ: Ինչպես «չարի», այնպես էլ «նեպուկի» իմաստն ու նշանակությունը քննարկման չի ենթարկված և՛ անցյալի և՛ մեր օրերի պատմական աշխատություններում: Որպես հարկային տերմիններ նրանք նույնիսկ չեն էլ ակնարկված: Այս բառի միայն լեզվական ստուգաբանությամբ զբաղվել են Հայկազյան բառարանի հեղինակները և ակադ. ակադ. Ն. Աճառյանը և Ստ. Մալխասյանը: Նոր Հայկազյան բառարանի հեղինակները հայկական «նեպակը» համեմատելով հունական «նեպուկ» բառի հետ, գտել են, որ «նեպակ» նշանակել է հարկի այն չափը, քանակը, որ դրվել է գյուղացիների վրա գյուղատնտեսական վնասատուներին ոչնչացնելու համար⁶: Այս ելույն իմաստով են մեկնել «նեպակը» նաև ակադ. ակադ. Ն. Աճառյանը և Ստ. Մալխասյանը: Սրանց կարծիքով՝ «նեպակն» մի տեսակ հարկ էր, որ զրադաշտական օրենքով, դրվում էր գյուղերի վրա վնասատու միջատների ոչնչացման համար: Այս առումով «նեպակը» պարտադիր աշխատանք էր, կոռ⁷:

¹ Վիմական տարեգիր, էջ 80:

² ՍՏ. Օրբելյան, էջ 330:

³ Վիմական տարեգիր, էջ 247:

⁴ Նույն տեղում, հմտ. ՍՏ. Օրբելյան, էջ 178, 181:

⁵ Նույն տեղում, էջ 8, ՍՏ. Օրբելյան, էջ 170—171, Ալիբաև, Սիսական, էջ 68:

⁶ Տես Նոր Հայկազյան բառարան(տես «նեպակ» բառը) հմտ. Առձեռն բառարան, էջ 613):

⁷ Տես Ն. Աճառյան, Արմատական բառարան, հատ. 3, էջ 28—27: ՍՏ. Մալխասյան, Բացատրական բառարան, հատ. 3, էջ 451:

Այս կոահումները և ենթադրությունները իսկապես զուրկ չեն որոշ հիմքից: Հայտնի է, որ պարսկական արքունիքը իր տիրապետության տակ եղած հարկատու շրջանների վրա դրել էր նաև գյուղատնտեսական վնասատուներին ոչ ընչացնելու որոշ չափի հարկ, տուրք, հարկադիր աշխատանք: Տալով պարսկական հարկային քաղաքականության նկարագիրը, Եղիշեն շոմեի «Նեպակ» բառը¹ Թ. Արծրունին կրկնելով Եղիշեի վկայությունը վնասատու միջատների ոչնչացման որոշ հարկի մասին, իր կողմից ավելացնում է «Նեպակ» բառը, և ահա այս միակ վկայությունն էր, որ հիմք է տվել «Նեպակը» ստուգարանել այդ իմաստով:

Սակայն միջին դարերում «Նեպակն» անցնելով իմաստաբանական զարգացման նոր շրջան, ստանում է հողային և դրամական հարկի իմաստ: Ստ. Օրբելյանը տալով Տաթևի վանքի հողային ընդարձակ կալվածների մասին արժեքավոր տեղեկություններ, ի միջի այլոց ասում է, որ Տաթևի վանահայր Դավիթը վճարելով 10,000 դրամ Փիլիպպե իշխանից գնում է Արծիվ և Բերդկաններն գյուղերը «ազատ յամենայն աշխարհական հարկաց և նեպակաց»²:

Ակնհայտ է, որ գյուղերը վճարել են «Նեպակ» կոչված հարկը և այդ հարկից նրանց ազատել են միայն գահերեց իշխանները: Սակայն այս հատվածում դեռ «Նեպակը» ստուգարանության չի ենթարկվում, հայտնի չէ, թե նա ինչ իմաստ և նշանակություն տնի: Նույն պատմիչը ունի մի այլ վկայություն, ուր «Նեպակը» արդեն դրամական հարկ է: Պատմիչն ասում է, որ Սյունյաց Զևանշեր իշխանը գալիս է Տաթևի վանքի վանահոր՝ տեր Սողոմոնի մոտ և սրանից խնդրում է իրեն հանձնել Բեխ գյուղը և որի փոխարեն խոստանում է տալ Արուքս գյուղը: Երկու ֆեոդալների միջև կնքվում է հատուկ պայմանագիր, որտեղ ասված է. «...Առաք զԲեխ իւր սահմանովն և արժունի նեպակովն և տուաք զԱրուքս իւր սահմանովն և արժունի նեպակովն ու էր 12 դրամ...»³: Ուրեմն յուրաքանչյուր գյուղ արքունիքին տարեկան որպես դրամական հարկ վճարել է 6-ական դրամ: Դրամական հարկի այս չափը չպետք է տարօրինակ թվա, եթե հաշվի առնենք, որ բացի դրամական հարկերից, գյուղացիները վճարել են արքունական բազմաթիվ այլ հարկեր և տուրքեր: Եթե մենք ընդունենք, որ «Նեպակը» արքունական և այն էլ դրամական հարկ էր, ապա հեշտությամբ լուծված պետք է համարել Տաթևի վանքին ենթակա, հարկատու գյուղերի հարկացուցակի մեջ Ստ. Օրբելյանի կողմից հիշատակված թվերի կնճառող պրոբլեմը:

Ստ. Օրբելյանն իր աշխատության վերջում «Սինեաց երկոտասան գաւառաց հարկ եկեղեցւոյ ըստ հին սահմանի» հարկացուցակում թվարկում է վանքին ենթակա շուրջ 700 գյուղերի անուններ և յուրաքանչյուր գյուղի դեմ դնում է 6, 8, 12, 20 թվեր: Մինչև օրս վերջնականապես չի պարզարանված ինչ են նշանակում այդ թվերը՝ դրամ, գյուղատնտեսական մթերքների որոշ չափ, քանակ, թե այլ բան: Պատմիչն Բաղդ գավառի հարկատու գյուղերի ցանկում հիշատակում է Արուքս գյուղը և դեմը դնում է 6 թիվը, Կովսական գավառի Բեխ գյուղի դեմաց նույնպես կա 6 թիվը: Ինչպես նկատելի է, երկու ֆեոդալները կատարում են այս գյուղերի փոխանակություն և յուրաքանչյուրի «Նեպակը» համարում են 6 դրամ: Հետևաբար Տաթևի վանքին ենթակա գյուղերը

¹ Տե՛ս Եղիշե, էջ 67—68, Թ. Արծրունի, էջ 27, 67—68:

² Ստ. Օրբելյան, էջ 204—205:

³ Ստ. Օրբելյան, էջ 216—218:

վանքին նույնպես վճարել են հարկեր և տուրքեր դրամով, Այս, թվում է, խիստ կարևոր եզրակացություն է ապացուցելու, որ Ստ. Օրբելյանի շրջանում հարկերն ու տուրքերը վճարվել են և՛ բնամթերքներով, և՛ դրամով: Որ գյուղերը միայն արքունիքին չէ որ վճարում էին դրամական հարկեր, այլև հոգևոր ֆեոդալներին, այդ մասին կան այլ վկայություններ: Ստ. Օրբելյանի ձեռագիր տեքստում, որն մեզ անհայտ պատճառներով բաց են թողել նրա հրատարակիչները, Տաթևի վանքին հարկատու, Ծղուկ գավառի Նորիք գյուղը վճարել է ԺԲ (12) դահեկան հարկ: Ուշագրավ է, որ վանքին հարկատու 657 գյուղերից առաջինը հիշատակված է Նորքին և հետևաբար պատմիչն անհրաժեշտ չի համարել մյուս գյուղերի դիմաց կրկնաբար դնել «դահեկան» բառը: Ստ. Օրբելյանի «Ժամանակագրություն» հավելվածում կան այլ ցուցումներ դրամական հարկերի մասին¹:

Բացի այս ուղղակի վկայություններից, ձեռագիր աղբյուրներում պահպանվել են այլ վկայություններ դրամական հարկերի և տուրքերի մասին: 18-րդ դարում կազմված մի ձեռագիր աղբյուրում ասված է. «Սիւնեաց երկուտասան գաւառաց վանքին պտուղն, այսինքն Տաթևու վեց հազար եօթն հարիւր ոսկիք թող զհոգեբաժինն աթոռասական»², Ճիշտ է, այս ձեռագիրը կազմված է 18-րդ դարում, բայց նրա կազմողն օգտագործել է Ստ. Օրբելյանի աշխատությունը, որովհետև պատմիչի մոտ բերված թվերի համեմատությունը ձեռագիր աղբյուրի թվերի հետ, ցույց է տալիս, որ նրանք շատ աննշան տարբերությամբ համընկնում են:

Ալիշանն իր «Սիսական» աշխատության մեջ ցույց է տվել, որ Տաթևի վանքը Հայաստանի ֆեոդալական վանքերից ամենից հարուստն էր և հզոր: Հեղինակի կարծիքով, Տաթևը ստանում էր ավելի շատ հաս-եկամուտ, քան «գյուղիս յաթոռաց Հայոց»³: Վանքն տներ բազմաթիվ գյուղեր, ագարակներ, լեռներ, դաշտեր և ջուր: Եթե 10—13-րդ դարում վանքին ենթակա էին շուրջ 700 գյուղ, ապա հետագայում նրանց թիվն իջնում է մինչև 260-ի: Այս 260 գյուղերից վանքը գանձում էր 500—600 հազար շահի հաս-հարկ կամ 20—25 հազար ուրբլի: Բայց գյուղերը դրամական հարկեր չէին վճարում միայն պետությունը, եկեղեցուն, այլև աշխարհիկ ֆեոդալներին:

Սյունյաց Սահան իշխանը հիշատակում է, որ ինքը Մաքենոցաց վանքին նվիրում է «Եթե հարիւր դրամ ի Դեղձենագետոյ զապալէն, երկու հարիւր դրամ ի Կաթկայ, երեք հարիւր յհիսուն յԱնմեռէն, որ լինի ՌՄԾ (1250) դրամ»⁴:

Շապուհ Բագրատունին Վահեվան վանքին նվիրում է «...երկու հարիւր վաթսուն դրամ ի Կոթաքարէն... հինգ հարիւր երեսուն ի Բրտննեացն, վեց հարիւր վաթսուն զԱղրոյ վանացն ծովէ, ինն հարիւր ինսուն ի Կարբի գետերէն և նաւերէն...»⁵, Գագիկ Շահնշահը թողնում է Մաստարայի դրամական հարկը, «զաւելորդն ԶՌ (6000)» և սահմանում է «ԵՌ (5000)» դրամ հարկ⁶:

Անկասկած է, որ այս գյուղերը, ձկնորսարանները, նավերը, գետերն ու

¹ Տես Ա. Արեանամյան, Ժամանակագրութիւն Ստեփանոս Օրբելյանի, էջ 41—43:

² Ձեռագիր, № 3403, էջ 104 ա:

³ Վիմական տարեգիր, էջ 5:

⁴ Նույն տեղում, էջ 6:

⁵ Նույն տեղում, էջ 13:

լճերը դրամական հարկի էին ենթակա հողատեր-ֆեոդալների կողմից և նրանք այդ հարկից չեն աղատվում նույնիսկ անվարձերով հետո էլ:

3. «Աշխարհական հարկ»: Սկզբնաղբյուրները խիստ սահմանագիծ են անցկացնում «արքունական» և «աշխարհական» հարկերի միջև: Եթե «արքունական» հարկը վճարվում էր պետությանը, ապա «աշխարհական» հարկը՝ հողատեր-ֆեոդալներին:

«Աշխարհական» հարկը պատմական այս շրջանում արդեն հանդիսանում էր արդյունքներով վճարվող այն ռենտան, որ հողատերերը ստանում էին նյութական բարիքներ արտադրողներից: «Աշխարհական» հարկի մասին պահպանվել են ավելի շատ վկայություններ, քան հարկերի այլ տեսակների մասին:

Տաթևի վանահայր Դավիթը գնում է Արծիվ և Բերդկաններէ գյուղերն «ազատ յամենայն աշխարհական հարկաց»¹: Սյունյաց Աշոտ իշխանը Ուանի Աստվածածին եկեղեցուն է տալիս Վարսեր, Յամաքաբերդ, Գոմաձոր, Բերդ գյուղերը և «Ուռեաց տափն», մեկ այգի Գառնիում, մեկ այլ այգի Երևանում, այլ այգիներ «յայլ տեղիս», «ազատ յամենայն աշխարհական հարկաց»²: Մարիամ իշխանուհին վճարելով 60. 000 դրամ, գնում է Շողուգա գյուղը, 3000 դահեկանով գնում է Գներ գյուղը, այս գյուղերը նվիրում է եկեղեցուն և նրանց ազատում է «աշխարհական» հարկերից³:

Աշխարհական հարկը գանձվում էր հողերից, ջրերից, այգիներից, գյուղերից, ագարակներից, բերդերից: Տաթևի վանահայր Ստեփանոսը դիմում է բոլոր միջոցներին և «զամենայն ու ինչ էր վանիցն առաւ ազատ յամենայն աշխարհական հարկաց՝ զհող և զջուր, զայգի, զգիւղ և զագարակ և զբերդն իսկ զԱնապատայ...»⁴: «Աշխարհական» հարկի մասին կան նաև այլ վկայություններ, որ մենք ավելորդ ենք համարում մեջ բերել:

Այսպիսով, «աշխարհական» հարկը այն արդյունքներով ռենտան էր, որ գյուղացիները վճարում էին հողատեր-ֆեոդալների, որպես բնամթերքներով հարկեր ու տուրքեր: Դժբախտաբար մատենագրական աղբյուրները հնարավորություն չեն տալիս որոշելու հարկերի չափն ու քանակը: Սակայն վիճական արձանագրությունները, ինչպես նաև Մխիթար Գոշի և Սմբատ Գունդստարլի «Դատաստանագրքերում» պահպանված վկայությունները հնարավորություն են տալիս պնդել, որ հողային հարկը տատանում էր բերքի 1/5 — 1/10 մասերի միջև: Զրարբի հողերից գանձվում էր եկամտի 1/5, իսկ անջրտի հողերից 1/10 մասը⁵:

4. «Անասնահարկ», «հարկ Ղեսարայ», «պաշտոն», «մուր»: Բացի հողահարկից, գլխահարկից, նյութական բարիքներ արտադրողներից հարկեր էին տալիս արոտավայրերից, խոտհարքներից, անասուններից, սրանց մթերքներից՝ կաթից, յուղից, պանրից, անասունները մի ֆեոդալի հողից մյուսի հողը՝ անցնելուց: Հովհ. Դրասխանակերտցին վկայում է, որ Սմբատ Բագրատունի

¹ Աս. Որբելյան, էջ 204—205:

² Նույն տեղում, էջ 174:

³ Նույն տեղում, էջ 174—175:

⁴ Նույն տեղում, էջ 346—352—494:

⁵ Նույն տեղում, էջ 229, 306—307; Հմմտ. Կ. Ղաֆադարյան, Հովհաննավոտքր և նրա արձանագրությունները, էջ 76, վիճական տարեգիր, էջ 19, 15, 137, 139 և ուրիշներ:

⁶ Վիճական տարեգիր, էջ 134—135, Ալլիսան, Շիրակ, էջ 113, Ս. Գուր, էջ 314—315, 427, Սմբատ Գունդստարլ, էջ 20:

թագավորը «ընդ բոլոր աշխարհս տէրութեան իւրոյ հինգերորդել հրամայէ զամենայն երամակս ձիոց և զանդեայս արջառոց և զհոտս տշխարաց...»¹ Այստեղ անասնահարկը սահմանված է հինգից մեկի հարաբերությամբ: Մ. Գոշը և Սըմբատ Գունդստաբլը սահմանել են անասնահարկի մասին հատուկ կանոններ: Գոշը սահմանում է, որ եզներին, էշերին, ջորիներին այլ հարկի պետք է ենթարկել, որովհետև նրանք «բազում անգամ ծառայէ զՏէրունիսն», կովերից պետք է մի լիտր յուղ գանձել²: Անասնահարկի, խոտհարկի մասին բազմաթիվ վկայություններ են պահպանել վիճական արձանագրությունները: Ոմն տիկնայաց-տիկին Տեկոր գյուղը ազատում է «զպաշտոտ» հարկից³: Ոմն Բեսաթա Օշականի բնակիչներին ազատում է «զգէսարայ զհարկն զգեղիս և զվանորայս...»⁴:

Անասնահարկի մասին, իր բազմաթիվ տեսակներով, ուշագրավ տեղեկություններ են տալիս Անիի 1301 և 1320 թթ. արձանագրությունները:

1301 թ. դալով Անի, Աղբուսեն թողնում է հիշատակություն, որ Անին խիստ թշվառ վիճակում էր գտնվում, որովհետև «շատ հարկ էր ի վերայ դրած...»: Աղբուսեն քաղաքն ազատում է «զեզինն հազրն, զկովին համբրէլէն, զոշխարհին աղհարկն»⁵:

1320 թվականի արձանագրությունով տմն խուանդես իշխանուհի իր Զաքարե որդու հետ թողնում է Անի քաղաքի «զկովերոյն և զիշանուն զհամբրէլէն և զղռագին մեծի և զփոքու...»⁶: Այս հատվածում հիշատակված «ղռագինն», հավանորեն այն հարկն է, որ գանձվում էր քաղաք ներմուծված մթերքներից և անասուններից:

Անասնահարկի իմաստով է գործածված նաև «Մրուր» բառը: Այս բառը միայն մեկ անգամ է գործածված Մրենի 1041 թ. արձանագրության մեջ, Գագիկ Շահնշահի գալով Մրեն տալիս է արձանագրել, որ նա Մրենը ազատում է «զծուծ և մրուր, զկապիճքն» հարկերից⁷: Ակնհայտ է, որ այս հատվածում «մրուրն» հիշատակվում է որպես առանձին հարկ: «Մրուրն» իր իմաստով համընկնում է արաբական «مُرُور» բառի հետ, որը նշանակել է «անցք, անցնել, անցահարկ» կամ այն հարկը, որ վճարվում էր անասունների հոտերը մի տեղից մյուսը փոխադրելու համար:

5. «Ջրային հարկ», «ջրասահին բաժ»: Հողահարկի, անասնահարկի հետ միաժամանակ հողատեր-ֆեոդալները գանձել են նաև ջրային հարկ:

Աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների հողերն ու այգիները ավելի պտղաբեր դարձնելու համար անցկացնում էին արհեստական ջրանցքներ, առուներ, ընդարձակում էին ոռոգման ցանցը: Տաթևի վանքի Հակոբ եպիսկոպոսը վճարում է 12,000 դրամ, պատվական գոհարներ՝ «բազում աշխատութեամբ ու մեծամեծ ծախիւք» բերել է տալիս առու «ի լեռնեն Զագեձորոյ... ի Ցաքուտն» և վանքի «առապար և փշալից» դաշտերը դարձնում է «վարդատու և տնկալից»: Մշակել է տալիս «բազում այգիս և որթս սորեկս... և զանազան պտղաբերեաց ձիթենիս, և թզենիս և նոնենիս, և յամենայն մրգաբերաց»: Առապար

¹ Հովհ. Գրասխանակեցցի, էջ 205:

² Գոշ, էջ 315—316, Սմբ. Գունդստաբլ, էջ 18—19:

³ Վիճական տարեգիր, էջ 22:

⁴ Նույն տեղում, էջ 137:

⁵ Նույն տեղում, էջ 151:

⁶ Նույն տեղում, էջ 160:

⁷ Նույն տեղում, էջ 22:

և փշալից հողերն, այս հոգևոր ֆեոդալը դարձնում է «դրախտս զարմանալիս... ի վայելումն եզրայրութեան»։ Այնուհետև Հակոբ եպիսկոպոսը թողնում է գիր-հիշատակ այն մասին, որ ջուրը հանդիսանում է վանքի սեփականությունը և նրանից անվարձ օգտվել չեն կարող նորեցանց, խոտենանեցանց, Շահերացաց և Հալեցեաց գյուղերի բնակիչները։ Հոգևոր ֆեոդալը խիստ կերպով սպառնում է, որ գյուղացիները իրավունք չունեն «ոչ յարտ կտրել և ոչ ի մարգ և ոչ պարտիզի ջուր տալ...»¹։ 1008 թվին, Հակոբ եպիսկոպոսի օրինակով, սրա հաջորդ Հովհաննես եպիսկոպոսը նույնպես «բազում ջանիւ և մեծամեծ ծախիւք» անցկացնում է մի նոր ջրանցք և սպառնում է, որ ոչ ոք իրավունք չունի կամ փակել կամ՝ անվարձ օգտվել այս ջրանցքից²։ Գոշի, Հոռոմոսի և այլ վանքերի պատերի վրա թողած արձանագրություններում պահպանվել են ոչ պակաս արժեքավոր վկայություններ ջրանցքներից օգտվելու կարգի և եղանակի մասին³։ Թե ինչ չափով հողի և ջրի նկատմամբ մասնավոր սեփականատիրական իրավունքը աղերսված էին, այդ ակնհայտ էր այն բնորոշ երևույթից, որ սկզբնաղբյուրներում հողային մասնատիրական իրավունքը ենթադրում է նաև ջրի նկատմամբ մասնատիրական իրավունք։ Մ. Գոշը բողոքում է, որ թագավորները, իշխանները սեփականացրել են նաև ջրի իրավունքը, չնայած «հող միայն է թագաւորի և իշխանի և ոչ ջուր»⁴։

Հողատեր-ֆեոդալները վանքերին և եկեղեցիներին հանձնելով իրենց գյուղերը, այգիները, հողերը, միաժամանակ նրանց են տալիս ջրից օգտվելու լիակատար կամ շաբաթվա որոշ օրեր օգտվելու իրավունքը։ 1036 թվի արձանագրության մեջ ասված է, որ Տեկոր և Ագարակ գյուղերի մեջ բորբոքվել էր պայքար ջրից օգտվելու համար։ Այստեղ սահմանված է հետևյալ կարգը՝ Տեկորին իրավունք է տրվում ջրից օգտվելու շորս օր և շորս գիշեր, իսկ Ագարակին երեք օր և երեք գիշեր, իսկ Այրիվանքին իրավունք է վերապահվում օգտվելու միայն ուրբաթ օրը⁵։ Զրային հարկը հայտնի է «խալէ», «հաս», «բաժ» անունների տակ։ 1036 թ. Պետրոս կաթողիկոսը Անիի եկեղեցուն նվիրում է Աշնակ գյուղը «որմով և ծառովոք, պտղաբերովք և անպտղովք, խոտաբերունովք» և «Գ (3) աւր ջուր ազատ ի խալանէ և ի գեղջէ յամենայն հասուց»⁶։ Ըստ 1228 թ. արձանագրության Շիրակ գյուղը ազատվում է «զջրասահին բաժէ»⁷։

Աղբյուրներում անհրաժեշտ վկայության բացակայության հետևանքով խիստ դժվար է որոշել ջրից գանձվող հարկերի և տուրքերի քանակը։ Ամենայն հավանականությամբ այդ հարկը գանձվում էր հաշվի առնելով, թե մեկ օրում որքան «բահաբերան» ջուր է օգտագործվել⁸։

6. «Շարիատ» կամ «Շարիաք»։ Անմիջական նյութական բարիքներ արտադրողների կողմից ֆեոդալ հողատերերին բնամթերքով հանձնված հավելյալ արդյունքները և դրամական հարկերը հայտնի էին «շարիատ» անվան տակ։

¹ ՍՏ. Օրբելյան, էջ 252—253։

² Նույն տեղում, էջ 262—263։

³ Վիմական տարեգիր, էջ 20, 26, 39, 40, 46, 71, 148 և ուրիշներ։

⁴ Մ. Գոշ. էջ 315. հմտ. Կանոնագիրք, էջ 46, 109, Մ. Կաղանկավազի, էջ 119—120. ՍՏ. Օրբելյան, էջ 30, 31։

⁵ Վիմական տարեգիր, էջ 20, 40։

⁶ Նույն տեղում, էջ 20։

⁷ Նույն տեղում, էջ 71։

⁸ Նույն տեղում, էջ 148։

Այս տերմինը պատմական շատ հին անցյալ ունի. նա հանդես է եկել հին կտակարանի հայերեն թարգմանությունն բնագրում և նշանակել է «տոկոս», որը վճարում էին փոխառուները ստացած արծաթի կամ կենսամիջոցների դիմաց¹։

Ակադ. Ն. Մառը, ընդհակառակը, «շարիատն» համարում է հոմանիշ արաբական *sariat*-ի հետ և գտնում, որ իբր «շարիատ» են կոչվել այն բոլոր հարկերն ու տուրքերը, որ հպատակներից գանձվել է մահմեդական «շարիատ» սովորույթի համաձայն²։ Ս. Եղիազարովը՝ ընդունելով Ն. Մառի ստուգաբանությունը, իր կողմից ավելացնում է, որ «շարիատն» իր էությունով «տասանորդն» էր, տրբ մահմեդական «շարիատի» իրավունքով գանձվում էին երկրի տնտեսության բոլոր ճյուղերից, ամեն տեսակի կայք ու գույքից, արհեստային արտադրության և առևտրական գործարքներից, հպատակ հարկատուներից, գյուղատնտեսական մթերքներից և այլն³։ Ակադ. Ն. Մառին և Ս. Եղիազարովին հայտնի չի եղել, որ «շարիատ» գործածական էր տրպես հարկային տերմին դեռ այն պատմաշրջանում, երբ շկային ոչ մահմեդականներ և ոչ էլ մահմեդական «շարիատ» իրավունքը։ Ակադ. Հ. Մանանդյանը ճիշտ է հասկացել և մեկնել «շարիատի» իմաստն ու իմացաբանական զարգացումը։ Հեղինակի կարծիքով «շարիատ» կոչված հարկը գանձվել էր հողերից, այգիներից, բամբակից, հացից, դարմանից։ Սակայն հարգելի գիտնականին անհայտ է մնացել այն, որ «շարիատն» նաև դրամական հարկ էր։ Ինչպես հարկային բոլոր, այնպես էլ «շարիատ» տերմինը անցել է պատմական զարգացման մի շարք էտապներ։ Եթե 5-րդ դարում նա իսկապես նշանակել է «տոկոս», «վաշխ», ապա զարգացած ֆեոդալական հարաբերությունների պատմաշրջանում նա փոխել է իր իմաստը և իր մեջ իմաստավորել թե՛ բնամթերքներով և թե՛ դրամով վճարած հարկեր ու տուրքեր։ «Շարիատն», որպես հողային հարկ. հիշատակված է Տեկորի 1008 թվի, Մաստարայի 1015 թվի, Աշտարակի 1323 թվի արձանագրությունների մեջ։ Առաջին արձանագրությունով Կատարանիդե հայոց թագավորին Տեկոր գյուղը ազատում է «շարիատ» հարկից։ Աշոտ թագավորն հաստատելով Կատարանիդեի արձանագրությունն իր կողմից ավելացնում է, որ ոչ ոք իրավունք չունի Տեկորից «կամ հարկ կամ շարիատ» գանձել⁴։ Այստեղ «շարիատն» հոմանիշ է հռոկի հետ։ «Շարիատից» ազատված են Մաստարա, Հովհաննավանք, Աշտարակ գյուղերը⁵։

«Շարիատ» էր գանձվում նաև այգիներից։ Աղբաղանը՝ Փարպի գյուղի իր այգիները ազատում է «շարիատէն»⁶, Դավիթը Ավանի այգին հայտարարում է ազատ «շարիատէն»։ Արուճի և Մրենի արձանագրություններով գյուղերն ազատվում են «զհացին» «շարիատից»⁷։ Շիրակավանի անթվակիր արձանագրությունով «շարիատ» կոչված հարկից ազատվում են անասունները⁸։

¹ Գիրք Աստուածաշունչք, մատեան հին և նոր կտակարանաց, Վենետիկ 1860, Ղևտ. 71. Իճ, էջ 113, Բ. Օրէնք, Կ. ԻԳ, էջ 176։

² Н. Марр, Новые материалы по армянской этнографии (см. ЗВО, т. VIII, СПб. 1893, стр. 80)։

³ С. А. Егиазаров, Исследования по истории армянского права, Киев, 1918, стр. 40։

⁴ Թ. Թորամանյան, Հայկական ճարտարապետություն, էջ 218—219։

⁵ Վիժական տարեգիր, 14, 16, 142, 161։

⁶ Նույն տեղում, էջ 107։

⁷ Նույն տեղում, էջ 126—127։

⁸ Նույն տեղում, էջ 147։

Բամբակի մշակույթից, արտադրությունից և վաճառքից գանձվող հարկերը նույնպես կոչվել են «շարիատ»¹:

«Շարիատ» հարկը գանձվել է յուղից, պանրից, ձեթից և գյուղատնտեսական այլ մթերքներից²:

«Շարիատն» որպես դրամական հարկ հիշատակված է Դաունիի մի արձանագրության մեջ: Այս արձանագրությունով Աթապակ Իվանեի դուստր Խոշակը Դաունիի եկեղեցուն նվիրում է իր սեփական հայրենիքը և հիշատակում է, որ «եզն ժԱ սպ (իտակ) շարիատ էր և ի՛նչ Ոչխարն Ա...մենք վերացուր զայս հարկ...»³:

Այսպիսով, «շարիատն» 10—13-րդ դարերում այն հարկերն ու տուրքերն էին, որ գյուղացիները հողատեր-ֆեոդալներին վճարում էին հողերից, այգիներից, ցանքսերից, հացից, դարմանից, կաթնամթերքներից, բամբակից և անասուններից:

Ամենայն հավանականությամբ այս հարկը չէր գերազանցում բերքի 1/10-րդ չափը, որովհետև կան վկայություններ, որ նա հաճախակի հիշատակվում է որպես «տասանորդ»:

7. «Պախտ-տանց»: Հարկային այս տերմինը հիշատակված է միայն մեկ անգամ և այն էլ Անիի 1045—1054 թթ. արձանագրության մեջ: Հ. Աճառյանը, Ստ. Մալխասյանը, Հ. Մանանդյանը «պախտը» համարել են հոմանիշ «շարիատին» և նշել, որ նա հավանորեն նույն հարկի պարսկերեն անունն է⁴:

Թվում է, որ հարգելի գիտնականների այս ենթադրությունն անհիմն է և պատմականորեն չի հաստատվում: «Շարիատն» որպես հողային ռենտա տներ, անկասկած, ավելի լայն իմաստ ու նշանակություն, քան «պախտը»: «Շարիատն» վճարում էին գլխավորապես գյուղերի, իսկ «պախտն» միայն քաղաքի բնակիչները:

Առո՞ն Մագիստրոսը գալով Անի իր հետ բերում է «Դիր ազատութեան» և զատում է «վասն պախտից տանց քաղաքիս և թաստակին, զոր տային ամ յամէ շափ ութից լտերց...», վերացնում է «զգիւտ երկուց լտերց, զոր տային մութսիրն այս ամէն»⁵: Ակնհայտ է, որ այս հարկը տալիս էին միայն քաղաքի բնակիչները և այն էլ քաղաքի հսկիչ-կառավարիչ՝ մուխթասիպներին: Այս հարկը թվում է, վճարում էին Անիի այն բնակիչները, որոնք զբաղվում էին այգեգործությամբ և գինեգործությամբ: Հայտնի է, որ միջնադարյան քաղաքներում ոգելից խմիչքներից գանձում էին հատուկ հարկ: Հետևաբար «պախտն» այն հարկն էր, որ վճարում էին լիտրներով մինչև շուկա դուրս բերելը, իսկ երբ ոգելից խմիչքներ շուկա էին արտահանվում, ապա նորից գանձվող հարկը կոչվում էր «մաքս», «բաժ» կամ «խալե»:

8. «Թաստակ»: Հարկային այս տերմինը գործածական է միայն վիճակահյ արձանագրություններում: Այդ է պատճառը, որ սա նույնպես խիստ դժվար է ստուգաբանության ենթարկված: Ակադ. Ն. Մառը այն համարում է հոմանիշ

¹ Վիճական տարեգիր, էջ 129—138:

² Նույն տեղում, էջ 8, 130:

³ Տե՛ս «Հովիտ», 1910, № 8:

⁴ Հ. Աճառյան, Արմատական բառարան, հատ. 5-րդ, էջ 781, ՍՏ. Մալխասյան, Բացատրական բառարան, հատ. 3-րդ, էջ 36, Հ. Մանանդյան, Նյութեր..., էջ 60:

⁵ Վիճական տարեգիր, էջ 27:

պարսկական «dastak» բառի հետ¹։ Ս. Ամատունին «թաստակը» համարում է նույն կոորդ², Ս. Եղիազարովը և Հ. Մանանդյանը՝ «տուրք», որ հավաքվում էր հարկահավաքների օգտին³։

Այս ուշագրավ, բայց տարբեր կարծիքները նույնպես թերի են և ամբողջապես չեն բացահայտում «թաստակի» իմաստը։ Հարկային այս տերմինը վիմական արձանագրություններում հիշատակված է միայն 5 անգամ և այն՝ ի միայն 11-րդ դարում, որից հետո նրա մասին այլ վկայություններ չկան։

Տեկորի 1014 թ. արձանագրությունով Աշտո Բագրատունի թագավորը գյուղը ազատում է այլև այդ թվում «քաստակ»՝ արկից⁴։ Հոռոմոսի 1013 թ. արձանագրով Գագիկ Ա. թագավորի հրամանով ոմն Անանիա «մեծաւ ջանիւ» Հոռոմոսն ազատում է «զհարկ և զթաստակ» տուրքերից⁵։ Երեբունի արձանագրությամբ գյուղն ազատում է «զքաստակ» հարկից⁶։ Առոն Մագիստրոս Անին ազատում է «թաստակից»⁷։ 1041 թ. «թաստակից» ազատվում է Ալամ գյուղը⁸։ Եթե «թաստակը» մենք համարենք նույն «շարիատն» կամ «պախտ տանցն», ինչպես ենթադրել է Կ. Մանանդյանը, ապա անիմաստ է դառնում միևնույն արձանագրության մեջ «շարիատի», «պախտ տանցի» և «թաստակի» միաժամանակ հիշատակումը։ «Թաստակի» մասին եղած բոլոր վկայությունները հիմքեր չեն տալիս ենթադրելու, որ նա վճարվել է հարկահավաքների-կառավարիչների օգտին։ Վիմական արձանագրություններում սրանց վճարված հարկերը հայտնի են այլ անունների տակ, որոնց մենք կանդրադառնանք քիչ հետո։ Այս հարկը վճարել են այն գյուղացիները, որոնք նստած էին արքունիքում տան կամ սրա անդամներին պատկանող հողերի բնակիչները։ Այս ենթադրության հիմք կարող են ծառայել այն, որ վերոհիշյալ 5 վկայություններն էլ վերաբերվում են միայն արքունիքին պատկանող բնակավայրերին և ոչ թե քաղաքային բոլոր գյուղերին։

9. «Ամիրահարկ» կամ «ամիրաներին վճարվող տուրքեր»։ Միջնադարյան Հայաստանի խոշոր, արհեստային արտադրության և առևտրի կենտրոններ-քաղաքներում լայն տարածում էր գտել պետական և վարչական կառավարիչների-ամիրաններից-ամիր, ամիրաններ, պարոններ, մուխթասիպների ցանցը։ Ամիրաններին վճարված հարկերն ու տուրքերը հայտնի էին «ամիրահարկ» անվան տակ⁹։ Ամիրահարկը նույնպես վճարում էին ինչպես քաղաքների, այնպես էլ գյուղաքաղաքների կամ քաղաքագյուղերի բնակիչները։

10. «Մուխթասիպներին» վճարված տուրքեր։ «Մուխթասիպ»-«մուսայիպ» «muhtasid» պետական այն պաշտոնյաներն էին, որոնք քաղաքներում կարգավորում էին առևտրական գործարքները, հսկում էին շուկաների, հրապարակների, խանութների և չափ ու կշիռների վրա։ Նրանք գանձում էին նաև հարկերն ու տուրքերը և վարում ոստիկանապետի պարտականությունները։ Սրանք, ամենայն հավանականությամբ, պետությունից ռոճիկ չէին ստանում և ապրում

¹ H. Mapp, Новые материалы..., стр. 80.

² Ս. Ամատունի, Հայոց բառ ու բանը, էջ 205։

³ С. Егиазаров, Исследования... 4, 43; Հ. Մանանդյան, Նյութեր... էջ 61։

⁴ Վիմական տարեգիր, էջ 13։

⁵ Նույն տեղում, էջ 14։

⁶ Նույն տեղում, էջ 21։

⁷ Նույն տեղում, էջ 27։

⁸ H. Mapp, Новые материалы... стр. 26.

⁹ Վիմական տարեգիր, էջ 226։

էին հարկատուներից հավաքված հարկերի և տուրքերի միջոցով: Սրանց վճարված հարկերի և տուրքերի մասին, դժբախտաբար, պահպանված է միայն երկու վկայություն, 1045—1054թթ. Անիի արձանագրությունով Առոնր ազատում է «մուծսիբի» օգտին գանձվող «պախտ տանց» հարկի մի մասից¹: Անիի միայլ, անթվակիր արձանագրությունով, զատվում է «մուսայիպի» օգտին գանձվող հարկը²: Ակնհայտ է, որ այս երկու վկայության մեջ նույնիսկ ակնարկով չի հիշատակված, որ «մուծսիպաների» օգտին գանձվող հարկերը կոչվել են «թաստակ», ինչպես ենթադրել է Հ. Մանանդյանը:

11. «Ձեռաւորներին» վճարված հարկերը: «Ձեռաւորները» հանգիստանում էին միջնադարյան Հայաստանի հարկահավաքները: Այս պաշտոնյաները նույնպես պետությունից ոռճիկ չէին ստանում և հարկերի մի մասը յուրացնում էին «ձեռաւորի հարկ» անվան տակ: Սրանց օգտին գանձվող հարկերի մասին վկայություններ են պահպանվել վիմական արձանագրություններում, Ն. Շնորհալիի, Ստ. Օրբելյանի մոտ և Ծորավանի ժողովի արձանագրությունում³:

12. «Շահնաւորներին» վճարված հարկերը: Բացի «միրահարկերի», «մուծսիպաների», «ձեռնաւորների» օգտին գանձվող հարկերից, սկզբնադրյունները հիշատակություններ են թողել նաև «շահնարներին» վճարված հարկերի ու տուրքերի մասին: Սկզբնադրյուններում կան տեղեկություններ այն մասին, որ վերջիններս հարկեր էին ստանում գյուղատնտեսական բոլոր մթերքներից և այդ թվում բամբակից⁴: Այսպիսով, նյութական բարիքներ արտադրողները հարկեր և տուրքեր են վճարել ոչ միայն կենտրոնական պետությանը, հողատեր-ֆեոդալներին, այլև պետական բազմաքանակ գործակալ-հարկահավաքներին:

13. «Խալէ, խալալ, խալան»: Վիմական արձանագրությունում հարկային այս տերմինը գործածված է միայն 6 անգամ:

Այս արձանագրություններում պահպանված վկայությունների ուշադիր քննարկումը ցույց է տալիս, որ «խալէ» հարկը գանձվել է ջրից և հատկապես այգիներից, գինիներից⁵:

Միջնադարյան Հայաստանում գյուղացիները վճարել են նաև «հաս», «սակ», «մուտ», «բաժ», «ծուծ», «կապիճ», բնամթերքներով և դրամով հարկերը: Նրանք բազմաթիվ հարկեր և հատկապես «պտուղ» ու «տասանորդ» են վճարել վանքերին, եկեղեցիներին և հոգևոր ֆեոդալներին: Բացի այս հարկերից ու տուրքերից, անմիջական և նյութական բարիքներ, արդեն միջին դարերում վճարել են բազմաթիվ դրամական հարկեր ու տուրքեր, որոնց մասին մենք կանդրադառնանք մի այլ հոդվածով:

Հայաստանում էլ ֆեոդալական-կալվածի ձևավորման հետ զուգընթաց հանդես է եկել աշխատանքային, ավելի ուշ շրջանում արգյունքային ռենտա, իսկ հետո դրամական հարկերն ու տուրքերը:

¹ Վիմական տարեգիր, էջ 27:

² Նույն տեղում, էջ 221:

³ Նույն տեղում, էջ 51—52, 71—72, 130, 134—135, Ն. Շնորհալի, Թուղթ րնդհանրական, էջ 92—93, Ստ. Օրբելյան, էջ 226—227, 232—233, 261—261, 367, 491, Գ. Հովսեփյան, Ծորավանի ժողովը (տես «Շողակաթ», գիրք Ա, 1913, էջ 44:

⁴ Վիմական տարեգիր, էջ 138:

⁵ Վիմական տարեգիր, 20, 110—111, 116, 130, 137, Ալիեան, Շիրակ, էջ 56: